

ՀՈՒՅԱԸ ԱՍՏԾՈՒ ՆՎԵՐՆ Է ՔԵԶ ՀԱՄԱՐ

«Ուշացած յույսը սիրտը կ'հիվանդացնի, բայց կատարված փափաքը կենաց ծառ է:» Առակաց 13:12

Աղքատիկ փոխանորդներ հույսի համար

- Ցանկություններով լի մտածելակերպ
- Կույր լավատեսություն
- Փառամոլությամբ լի երազանքներ

Որոշ մարդկանց համար հույսը մի բան է, որ անում են, բայց Աստվածաշունչը խոսում է հույսի մասին որպես մի բան, որ մենք կարող ենք ունենալ:

Հույսը վստահ ակընկալությունն է Աստծո խոստումների, որը Աստված ուզում է, և կարող է կատարել:

«Իր առատ ողորմությամբ վերստին ծնեց մեզ, որպեսզի մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությամբ ունենանք այն կենդանի հույսը, թե ժառանգելու ենք անեղծ, անարատ և անթառամ կյանքը, որ երկնքում պահված է ձեզ համար:» Ա Պետրոս 1:3-4

«Այդ հույսը մեր խարիսխն է, ապահով և անշարժ.» Եբրա 6:19

Ի՞նչն է պատճառը, որ Քրիստոնյաները հույս ունեն

- Քրիստոնյաները հույս ունեն, որովհետ գտված են իրենց անցյալի կապաքներից:

«Մրանք ես իմ միտքն եմ բերում, ուրեմն ես հույս ունեմ: Տիրոջ ողորմություններն են, որ չ'վերջացանք, որովհետև չ'պակասեցան նրա գթությունները. Նրանք ամեն առավոտ նորանոր են.» Երեմիայի Ողբերը 3:21-23

«Այս աշխարհի հարուստներին պատվիրի՛ր, որ շատ չհպարտանան և չվստահեն անկայուն հարուստությանը, այլ վստահեն Աստծուն, որ ամեն ինչ առատորեն տալիս է մեզ, որպեսզի վայելենք:» Ա Տիմոթեոս 6:17

- Քրիստոնյաները հույս ունեն, որովհետև նրանք ապահովագրել են իրենց ապագան:

«Եվ փրկեց մեզ ոչ թե մեր կատարած գործերի համար, այլ պարզապես իր ողորմած լինելու համար... որպեսզի Քրիստոսի շնորհով արդարացած՝ ժառանգենք հավիտենական կյանքը, որի հույսն ունենք:» Տիտոս 3:5,7

Նոր տարվա աղոթք քեզ համար՝ Պողոս Առաքյալի բառերով

«Իմ աղոթքների մեջ միշտ հիշում եմ ձեզ, որպեսզի մեր Հիսուս Քրիստոսի Աստվածը՝ Հայրը, որին պատկանում է փառքը, ձեզ իմաստություն և հայտնություն պարգևող հոգին տա, որպեսզի կարողանաք ճանաչել իրեն: Այո՛, աղոթում եմ, որ Աստված լուսավորի ձեր մտքի աչքերը, որպեսզի իմանաք, թե ի՛նչ է այն հույսը, որին նա հրավիրեց ձեզ, թե ինչքա՛ն ճոխ ու փառավոր է այն խոստումը, որը ժառանգելու են նրա ընտրյալները, և թե ինչքա՛ն գերազանց ու մեծ է այն ուժը, կարողությունն ու գորությունը, որ ներգործում է հավատացյալներիս մեջ: Այդ ներգործող գորությունը Աստված ցույց տվեց Քրիստոսի անձով՝ նրան հարություն տալով մեռելներից և նստեցնելով իր աջ կողմում, երկնքի մեջ՝ ոգեղեն աշխարհի բոլոր իշխանություններից ու պետություններից, գորություններից և տերություններից բարձր և դեռ ուրիշ անուններով ծանոթ բոլոր իշխանությունների վրա՝ թե՛ ներկա աշխարհում և թե՛ գալիքում:» Եփեսացիս 1:16-21

